

10 օգոստոսի 2018թ.

Հայտարարություն ՀՀ Սյունիքի մարզպետարանի ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

ՀՀ Սյունիքի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան) ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետի (68-3.2-29)

Մասնակցում է պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացված միջոցների ընթացիկ ֆինանսավորման և դրանց նպատակային օգտագործման վերահսկմանը, միջնաժամկետ ծախսային ծրագրերի ամփոփման աշխատանքներին, մարզային ենթակայության կազմակերպությունների կողմից բյուջետային միջոցների նպատակային օգտագործման և հաստատված նախահաշիվների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացմանը, հաջորդ տարվա բյուջեի հաշվին մարզպետարանի պատվիրատվությամբ կատարվող ծախսերի բյուջետային հայտերի ամփոփմանը և ներկայացմանը։ Մարզպետարանի համակարգի կազմակերպություններում գնումների մասին օրենսդրության պահանջների կատարման հսկողության իրականացմանը։

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ։

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ունի «Տնտեսագիտություն (Էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով» բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների, տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ։

- ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության, «Տեղական ինքնակառավարման մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Գնումների մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն։

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն։

Աշխատավարձի չափը՝ 150799 (հարյուր հիսուն հազար յոթ հարյուր ինսուսնիսնը) դրամ

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև նշված քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը։

Վերը նշված պաշտոնը կարող են զբաղեցվել՝ տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները։

Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է։

Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի անձը, որը՝

- 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ։
- 2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից։
- 3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչնդոտել իր լիազորությունների իրականացմանը։
- 4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ։
- 5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն։

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի աշխատակազմ (ք. Կապան, Նժդեհի 1,) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

- գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճեն (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը հանձնում են ներկայացնում են անձամբ (ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետարան, անձնակազմի կառավարման բաժին):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9:30-ից մինչև 12:30-ը բացի շաբաթ և կիրակի օրերից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են զանգահարել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ (0285)44275 հեռախոսահամարով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 15/08/2018թ.:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի գլխավոր քարտուղար

պարոն _____

ից

դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

—

դիմողի հասցեն

—

դիմողի անձնագրի տվյալները, հեռախոսահամարը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ Ձեզ ժամկետային աշխատանքային պայմանագրով նշանակել ինձ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի _____

_____ ժամանակավոր թափուր պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Ժամանակավոր թափուր պաշտոնում:

Հայտնում եմ, որ.

1. Համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

_____ (ունեմ, չունեմ)

2. Տիրապետում եմ համակարգչային ծրագրերին (Վինդոուզ, Վոռդ, Էքսել, Աքսես և այլն)

3. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ _____

_____ (ճանաչված եմ, ճանաչված չեմ)

4. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից _____ որևէ _____ մեկով

_____ (տառապում եմ, չեմ տառապում)

5. Այլ վճարովի աշխատանք (բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից)

_____ (իրականացնում եմ, չեմ իրականացնում)

6. Անձամբ _____ ձեռնարկատիրական _____ գործունեությամբ

_____ (զբաղվում եմ, չեմ զբաղվում)

7. Անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ ինսամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ

_____ (գտնվում եմ, չեմ գտնվում)

8. <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասով սահմանված պահանջներին _____

_____ (բավարարում եմ, չեմ բավարարում)

Նախագուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____
ստորագրություն _____ անուն, ազգանուն _____

« _____ » _____ 2018թ.

**Ժամկետային պայմանագիր կնքելու
գործողությունների հաջորդականությունը**

1. Ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու օրվան հաջորդող **երկու աշխատանքային օրվա** ընթացում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (ՊԱ) **մարզպետարանի ՔԾ կադրերի ռեգերվում** գրանցված քաղաքացիական ծառայողին կարող է առաջարկել կնքել պայմանագիր՝ տեղադրելով տվյալ քաղաքացիական ծառայողի տվյալները **մարզպետարանի պաշտոնական կայքէջում**:

2. Եթե պայմանագիր չի կնքվում (ռեգերվից)՝ **մեկ աշխատանքային օրվա** ընթացում **մարզպետարանի պաշտոնական կայքէջում** հրապարակվում է հայտարարություն՝ համապատասխան տեղեկություններով:

3. Փաստաթղթերը ներկայացնելու ժամկետի ավարտից հետո **մեկ աշխատանքային օրվա** ընթացում ՊԱ-ը կատարում է ընտրություն և առաջարկում է կնքել պայմանագիր:

4. **Մարզպետարանի պաշտոնական կայքէջում** տեղադրվում է տեղեկատվություն դիմում ներկայացրած անձանց մասին՝ նշելով այն անձին ու հետ կնքվել է աշխ.պայմ., հրաժարվելու դեպքում՝ նաև հրաժարվողի, ինչպես նաև այն անձանց, ում հետ չի կնքվել:

5. Եթե դիմումներ չեն ներկայացվել կամ դիմած անձանց տվյալները չեն բավարարել և պայմանագիր չի կնքվել, ապա մարզպետարանը **վերջնաժամկետի հաջորդ աշխատանքային օրը** դրա մասին **տեղեկություն է հրապարակում իր պաշտոնական կայքէջում և հրապարակում նոր հայտարարություն**:

6. Կնքված պայմանագրի պատճենը **մեկ աշխատանքային օրվա** ընթացում ուղարկվում է **ՔԾ գրասենյակ**:

7. **Պայմանագիրը լուծվելուց հետո լուծման մասին իրավական ակտի պատճենը մեկ աշխատանքային օրվա** ընթացում ներկայացվում է **ՔԾ գրասենյակ**: